դալիս է մի ռուս, որ նրանից շատ էլ լաւը չի լինում»:

Եւ այսպէս, ընութիւնը դաժան, իշխանաւորը անսիրտ: Ու հայ մարդու, մանաւանդ հայ գիւղացու աշխատասիրութիւնն է, որ մեղմում է ազէտը:

«Եթէ չհաշուենք չինացիներին», ասում է Վաղներ, «ամբողջ երկրագունդի վրայ հազիւ թէ գտնուի մի ուրիշ ժողովուրդ, որ աւելի լաւ հասկանայ ջուրի, ոռոգման օգնութեամբ հողն այնպէս արդաւանդ դարձնել, ինչպէս՝ հայը եւ պարսիկը: Շատ տեղեր, որ հողը կամովին եւ ոչինչ պիտի արտադրէր, այս ժողովուրդների զարմանալի կարողութիւնը դաշտամշակութեան եւ այգեմշակութեան մէջ՝ ստեղծել է մի ինքնայատուկ մշակոյթ: Եւ ես կարծում եմ, որ Եւրոպայի բոլոր ժողովուրդներն էլ երկրագործութեան այդ ճիւղում սովորելիք ունին նրանցից:

Այս ընդարձակ դաշտի բաւական հարուստ բերքը արդիւնք է միայն եւ միայն արուեստական ոռոգման: Ամէն մի առուակ, ամէն մի գետակ ճիւղաւորւում է հազարաւոր առուների, որոնք եւ ջրում են դաշտերը... Ամէն մի աղբիւր, ամէն մի փոքրիկ ջուր հայը գիտէ լաւագոյն կերպով օգտագործել՝ հողագործութեան համար: Երեւանի շուրջը եղած գեղեցիկ այգիները, որոնք ովասիսների են նմանում անապատի մէջ, արդիւնք են միայն այսպիսի շարքաշ, արուեստական ոռոգման եւ ծայր աստիճան խնամքին իրենց տէրերի:

Եւ սակայն լսեցի շատ դժգոհութիւններ այն մասին թէ՝ ռուսական տիրապետութեան օրով, նախկին ժամանակների բաղդատութեամբ, բարձի թոռի են արուած ոռոգման առուները, թէ՝ հետզհետէ խափանւում են աղբիւրները եւ ջրանցքները: Որքան եւ պարսիկները ճնշել են ու կողոպտել ժողովրդին, բայց եւ այնպէս նրանք հոգատար վերաբերմունք են ունեցել առուների պահպանութեան համար»:

(Վերջը յաջորդով)

ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻՆ ՎՐԱՅ

(ՆԻՒԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ)

Գրեց՝ ՀՕՐ. ԳԱԲՐԻԷԼ ՂՈՐՂԱՆԵԱՆ

(ՆԱԽԿԻՆ ԵՆԹԱՊԵՏ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ԸՆԴՀ. ՍՊԱՅԱԿՈՅՏԻՆ)

Ռուսերէն ձեռագրէ թարգմ. Ռ. Լ.

ԳԼՈՒԽ VII
ԽԻԶԱՆԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

(Տեսնել քարտէս թիւ 7)

Խիզանի արշաւանքը, որ կատարուեցաւ Գ. (Համազասպի) խումբին կողմէ, Բաղէշի շուրջը մղուած պայքարի առանձին մէկ դրուագը կը ներկայանայ:

Այդ արշաւանքին նպատակը կը ճշդուէր կովկասեան բանակի հրամանատար զօր. Իւդենիչի կողմէն Վանի ջոկատի հրամանատար զօր. Կուլերեակինին տրուած հեռագրին մէջ. «Անյապաղ ուղարկել Գ. խումբը՝ Խիզանը դըրաւելու եւ Սղերդի կողմը հետախուզութիւն կատարելու համար»: Ստացուած տեղեկութիւններու համաձայն թուրքերը Սղերդի կողմէն կը պատրաստուէին յարձակողական՝ ետ առնելու համար Բաղէշը:

Արշաւանքի ելնող ջոկատի կազմին մէջ կը մտնէր նաեւ մէկ հարիւրեակ կողակ. բայց ան չէր մասնակցեր ռազմական գործողութիւններու, այլ միայն կը հսկէր ճամբաներու, անթել հեռագրի կայանի ապահովութեան եւ պարէնի ու ռազմամթերքի փոխադրութեան:

Ջոկատը մեկնեցաւ Վանէն դէպի Ոստան